



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ԱՍՈՑԻԱՑԻԱ

*«Հարմարվողականության ազգային ծրագիր (ՀԱԾ)՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար»
ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր*

**ՎԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱՌՈՂՋԱԳՆԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Օգոստոսի 26-27, 2022թ.

«Դիլիջազ» հյուրանոց, Թեղուտ գյուղ, Դիլիջան համայնք, Տավուշի մարզ

Աշխատաժողովն իրականացվում է Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսավորմամբ ՄԱԶԾ կողմից իրականացվող «Հարմարվողականության ազգային ծրագիր (ՀԱԾ)՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում:

Նպատակը՝ Աշխատաժողովի նպատակն է ներկայացնել ՄԱԶԾ-ԿԿՀ ՀԱԾ ծրագրի կողմից ներգրավված՝ Հայկական բժշկական ասոցիացիայի և Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից 2021թ.-ի դեկտեմբեր – 2022 թ.-ի օգոստոս ամիսներին իրականացված Հայաստանում առողջապահության ոլորտի կլիմայական ռիսկերի ու խոցելիության գնահատման արդյունքները և հարմարվողականության ծրագրի նախագիծը:

Աշխատաժողովում նախատեսվում է ներկայացնել և շահագրգիռ կողմերի հետ քննարկել առողջապահության տարբեր ենթաօլորտներում կլիմայի փոփոխության նկատմամբ ռիսկերի և խոցելիության ուսումնասիրության արդյունքները՝ վեր հանելով ոլորտի գործունեության այն ուղղությունները, տեսակները և շահառու խմբերը, որոնք առավել խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ, ներկայացնել հարմարվողականության գերակա միջոցառումները, ինչպես նաև հավաքագրել մեկնաբանություններ՝ դրանց լրամշակման նպատակով:

Առողջապահության ոլորտի հարմարվողականության ծրագրի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշումից («Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին», Գլուխ 9, Կետ 1.4):

Նախագիծը՝ Առողջապահության ոլորտի հարմարվողականության ծրագրի նախագծին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3Azbf1r>

Ձևաչափ՝ Աշխատաժողովը տեղի կունենա հիբրիդային ձևաչափով: Աշխատաժողովին կարելի է մասնակցել առցանց՝ միանալով <https://undp.zoom.us/j/87405927054> հղումով:

Աշխատանքային լեզուն՝ Աշխատաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է: Աշխատաժողովի առաջին օրը հասանելի կլինի անգլերեն թարգմանություն Zoom ձևաչափով:

ՕՐԱԿԱՐԳ
(նախագիծ)

26 Օգոստոս, 2022թ. (Ուրբաթ)	
14:00	Մեկնում Երևանից
16:00-16:30	Ժամանում, մասնակիցների գրանցում, սուրճի հյուրասիրություն
16:30-16:50	Բացման խոսք <ul style="list-style-type: none"> • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն • ՄԱԶԾ Հայաստան • Հայկական բժշկական ասոցիացիա
16:50-17:00	Հարմարվողականության ազգային ծրագրի գործընթացի իրականացումը Հայաստանում <i>ՄԱԶԾ-ԿԿՀ ՀԱԾ ծրագիր</i>
17:00-17:15	Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և հարմարվողականության Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ուղեցույցները <i>Արմինե Հովսեփյան, ՄԱԶԾ-ԿԿՀ ՀԱԾ ծրագրի խոցելիության և հարմարվողականության հարցերով հանրային առողջապահության փորձագետ</i>
17:15-17:40	Կլիմայի փոփոխության նկատմամբ առողջության խոցելիության գնահատման ներկայացում <i>Անաստաս Աղազարյան, ՀՀ ԱՆ ԱԱԻ առողջապահության ազգային հաշիվների բաժնի ղեկավար, ՄԱԶԾ-ԿԿՀ ՀԱԾ ծրագրի փորձագետ</i>
17:40-18:00	<i>Հարց ու պատասխան, քննարկում</i>
19:00	<i>Ընթրիք</i>
27 Օգոստոս, 2022թ. (Շաբաթ)	
09:30-10:30	<i>Նախաճաշ</i>
10:30-10:45	ՀՀ առողջապահության ոլորտի հարմարվողականության միջոցառումների ներկայացում <i>Դիանա Անդրեասյան, ՀՀ ԱՆ ԱԱԻ փոխտնօրեն հանրային առողջապահության հարցերով, Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար, ՄԱԶԾ-ԿԿՀ ՀԱԾ ծրագրի փորձագետ</i>
10:45-11:00	<i>Հարց ու պատասխան, քննարկում</i>
11:00-11:45	Բուժաշխատողների ռեգիստրի ձևավորման և վարման կարգը հաստատելու նախագծի ներկայացում <i>ՀՀ ԱՆ</i>
11:45-12:30	<i>Հարց ու պատասխան, քննարկում</i>
12:30-13:30	<i>Ճաշի ընդմիջում</i>
14:00	Մեկնում Երևան